Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՌՈՒԹ ԲԵԴԵՎՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՌՈՒԹ ԲԵԴԵՒԵԱՆՆԵՐ, ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՍԻ, ԱՄՆ

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու գնահատանքն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակներիդ եւ ազնիւ բարերարներիդ:

Սիրելի Տէր եւ Տիկին Բեդեւեաններ, ճանաչեցինք Ձեզ, երբ գարիներ առաջ, Մեր հրաւէրին ընդառաջ, սիրով յանձն առաք Ձեր նպաստը բերելու Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցի առաքելութեանը՝ դառնալով Մեզ համար թանկ ու հարազատ այդ կրթօջախի առաջին բարերարներից: Այդ օրից ի վեր Մենք բազմիցս առիթ ունեցանք ականատես լինելու Ձեր զօրեղ հաւատքին, զոհողութեան պատրաստակամութեանը: Ձեր եկեղեցասէր ու հայրենասէր ոգու արտայայտութիւնը դարձան Ձեր նորանոր յանձառութիւնները, հայրենի սրբազան հողում Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու կառուցման հովանաւորութիւնը, Վանաձորի Հայորդեաց Տան եւ բարեգործական ճաշարանի հիմնումը, որոնք կոչուած են ծառայելու հայրենաբնակ մեր ժողովրդի հոգեւոր կեանքի վերանորոգութեանն ու սոցիալական դժուարութիւնների յաղթահարմանը:

Հոգու խնդութեամբ ենք անդրադառնում Միածնաէջ Սուրբ Աթոռի շինութեանն ու պայծառութեանը մասնակցութիւն բերելու Ձեր ազնիւ պատրաստակամութեանը: Ձեր իշխանական նուիրատուութեամբ հիմնիվեր նորոգուեց Խրիմեան Հայրիկի գահակալութեան շրջանում Մայր Աթոռում կառուցուած թանգարանի շէնքը, որի օրհնութեան արարողութիւնը կատարեցինք այսօր՝ Ձեր, Մայր Աթոռի միաբանութեան եւ հաւատացեալ հայորդեաց աղօթակցութեամբ: Թանգարանը նոր հնարաւորութիւն է ընձեռելու Սուրբ Էջմիածնի այցելուներին ու ուխտաւորներին ներկայացնելու շնորհաշատ հայորդեաց բարձրարուեստ ստեղծագործութիւնները, մեր ժողովրդի հոգեւոր արժէքներն ու հայ մշակոյթի գանձերը:

«Ի գործոց անտի հաւատքն կատարեցան». Առաքեալի այս խօսքերը արժանապէս վերաբերում են հաւատաւոր ամոլիդ, եւ դրա խօսուն վկայութիւնը Եկեղեցաշէն Բարերարներիդ ասպուածահաճոյ կեանքն ու բարի գործերն են, ազգային մեր արժէքներին ու նախնեաց կենդանարար աւանդներին Ձեր հաւատարմութիւնը, որոնք խրախուսիչ օրինակ են

դարձել նաեւ շատերի համար՝ իրենց արդար վաստակը նուիրաբերելու ի նպաստ եկեղեցաշէն ու հայրենաշէն գործերի:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը մեր Եկեղեցու եւ ժողովրդի կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Վստահ ենք, որ Մայր Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնաւորուել ապրուածահաճոյ նոր ձեռնարկներով:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 323